

զագանաբարոյ ախոյենին պիղծ բազկաց մէջ (Փաւս. 170-1):

Աւելին կայ: Քաջն Մանուէլ մամիկոնեան, հայ վտանգեալ թագին եւ աշխարհին պաշտպանութեան անձնատուր, իւր զօրքը խաղացուց Պարսից ու Մերուժանայ դէմ՝ վճռական ճակատամարտի մը, եւ բանակ զարկաւ Բագուանի մէջ: Թշնամին հեռի էր, բայց կը լրտեսէր զինք արթնութեամբ. իսկ Հայք փոխանակ աչալըրջութեամբ սպասելու՝ ինչպէս կը պահանջէր պարագայն, սպարապետին հրամանաւ սկսան որսի կրքալ. — զբօսանք մը՝ որ բանակին սովորական էր խաղաղութեան ժամանակ ալ (Ագթ. 164): — Եւ երբ ձիաւորեալ պիտի մեկնէին, յանկարծուտ հասաւ թշնամուոյն մերձեցման լուրը: Անոնք տազնապած՝ Ս. Կարապետին ապաւինեցան, եւ աճապարեցին իրենց կապարճները փոխանակ երէոց՝ Պարսից դէմ դարձրնելու: Բախտին կամ Կարապետին օգնութիւնն էր որ փրկեց զիրենք որկրամոլ զբօսասիրութեան պատրաստած աղետէն (Փաւս. 251-3):

Միակ դէպքը չէր այդ, եւ ոչ ալ յատուկ որոշ շրջանի մը: Վեց դար վերջ Դերենիկ արծրունի, Արարաց հետ կռուի մէջ, մինչդեռ զիշեր մը զօրացը հետ կը